



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
29/01/2018թ. երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանիննին

Մենք՝ մի կողմից սեփականատեր
ՀՀ քաղաքացի **ՀԱՅԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՐՇՈՒՄԱՆՅԱՆՍ**, ծնված՝ 09/08/1990թ-ին, ՀԾՀ՝ 1908900865,
Նույնականացման քարտ՝ 007735087, տրված՝ 006-ի կողմից, 05/04/2016թ-ին, հաշվառված՝
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԽՈՒՂՅԱՎՈՎԻ ՓՈՂՈՑ, 8 (ՈՒԹ) ՏԱՆԸ, այսուհետ «Վարձատու»,

և մյուս կողմից «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ (գրանցման համար՝ 278.180.03555, գրանցման ամսաթիվ՝ 2004-03-23, ՀՎՀՀ՝ 02534328, գտնվելու վայրը՝ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՆՑ / Տ / 7 (ՅՈԹ) քաղաք Երևան 0023 ՀԱՅԱՍՏԱՆ), ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ **ՎԱՐՂԱՆ ՌՈՒԲԻԿԻ ՀԱՍՐԱԹՅԱՆԻ**, ծնված՝ 18/04/1971, այսուհետ՝ «Վարձակալ», որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ **ՆՎԵՐ ԲՈՐԻԿԻ ԹՈՒՆՅԱՆԸ**, ծնված՝ 12/12/1980թ-ին, ՀԾՀ՝ 2212800266, անձնագիր՝ AM0808816, տրված՝ 005-ի կողմից, 12/07/2012թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՋՐՎԵԺ ՄԱՅԱԿ 39-11 (ԵՐԵՍՈՒՆԻՆԸ ԳԻԾ ՏԱՆՆԵԿ) ՀԱՍՑԵՈՒՄ, (լիազորագիր 22.01.2018 N ՎՀ 17.1/211-18, լիազորագիրը տես գործում), կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մարզ Արագածոտն, համայնք Թալին ք. Տերյան փողոց 24 (քսանչորս) շենք, 49 (քառասունինը) տարածք հասցեում գտնվող անշարժ գույքից 51.67 (հիսունմեկ ամբողջ վաթսուկյոթ) քմ՝ մակերեսով տարածքն ամբողջությամբ (այսուհետ՝ «անշարժ գույք»)՝ համաձայն կողմերի կողմից գծապատված, ստորագրված, «Վարձակալությամբ տրվող տարածք» նշումով հատակագծի, որը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
Անշարժ գույքը հանձնվում է Վարձակալին՝ գույքի նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով:

Անշարժ գույքի նկարագիրը.

շինության ծածկագիրը՝ 02-003-0030-0001-001-049
նպատակային նշանակությունը՝ հասարակական
ընդհանուր մակերեսը (քմ.)՝ 172.9 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ ինը)
իրավունքի տեսակը՝ սեփականություն

1.2. Վարձակալության հանձնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Արաբկիր» *2* սպասարկման գրասենյակի կողմից 25 մայիսի 2017թ. տրված N 25052017-02-0015 (գաղտնաբառ՝ WAUTDB4MBAQZ) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի:

1.3. Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Կենտրոն» *2* սպասարկման գրասենյակի կողմից «18» հունվարի 2018թ. 10:06 դրությամբ տրված N ՍՏ-18012018-02-0148 (գաղտնաբառ՝ ՍՄՍԼՄՄ45ՆՎՄ) միասնական տեղեկանքի՝ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստում է նաև Վարձատուն:

1.4. Պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքը հանձնման-ընդունման ակտով հանձնվում է Վարձակալին սույն պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելուց հետո:

1.4.1. Եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի



արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն պարտավորվում է՝

- ա) անշարժ գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:
- բ) Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.2. Վարձակալը պարտավորվում է՝

- ա) ժամանակին վարձատուին վճարել վարձակալված անշարժ գույքի համար վարձավճարը սույն պայմանագրով նշված չափերով և պայմաններով, ինչպես նաև ժամանակին կատարել ամսական վարձավճարի հետ կապված հարկային պարտավորությունները:
- բ) վարձակալված անշարժ գույքն օգտագործելիս պահպանել տարածքը, սահմանված սանիտարական, բնապահպան, հակահրդեհային և օրենսդրությամբ սահմանված այլ նորմերը, ապահովելով դրանց համապատասխան ձևակերպումները, իսկ անտնտեսվար օգտագործման հետևանքով տարածքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցների հաշվին:
- գ) սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում համապատասխան ակտով տարածքը հանձնել Վարձատուին այն վիճակով, ինչ վիճակով ընդունել է այն, վերացնելով պատճառած վնասը կամ փոխհատուցել վնասը շուկայական գներով՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը:
- դ) պահպանել տեխնիկական, սանիտարական, հակահրդեհային անվտանգության կանոնները և նշված կանոնները չպահպանելու հետևանքով հատուցել այլ անձանց և տարածքին պատճառած վնասը:
- ե) իր միջոցներով վերականգնել տարածքում իր կողմից հասցված վնասները:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

- ա) գույքն օգտագործել նպատակային նշանակությամբ:
- բ) Վարձատուից պահանջել վերացնել բոլոր այն թերությունները և բացթողումները, որոնք խանգարում են Վարձակալին իրականացնել իր իրավունքները, եթե այդ թերություններն ու բացթողումները հնարավոր է վերացնել և դրանց վերացման աշխատանքները դրված է Վարձատուի վրա կամ եթե դրանք վերացնել իրավասու է միայն Վարձատուն:
- գ) կատարել տարածքի շինարարական, վերանորոգման աշխատանքներ, Վարձատուի հետ նախապես համաձայնեցված պլանի համաձայն՝ պահպանելով շինարարական նորմերի պահանջները:

2.4. Վարձատուն իրավունք ունի՝

- ա) ստանալ վարձավճար սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով:
- բ) Վարձակալից պահանջել օգտագործել անշարժ գույքը սույն պայմանագրով սահմանված նպատակներով:
- գ) Վարձակալի հետ միասին մուտք գործել տարածք վարձակալված անշարժ գույքի օգտագործման պայմանները հսկելու նպատակով:

3. ՀԱԾՎԱՐԿՆԵՐԸ

3.1. Վարձավճարը սահմանվում է 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ վարձակալության ողջ ժամանակահատվածի համար, որը ներառում է հարկերը և փոխանցվում է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ում Վարձատուի անվամբ բացված 2470049956240000 հաշվեհամարին մինչև յուրաքանչյուր հաջորդող ամսվա հինգը:

3.1.1. Պայմանագիր կնքած անձի (կատարողի (վարձակալի)) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

- 3.1.2. Վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելից գումարների հետ:
- 3.2. Օգտագործված էլեկտրական էներգիայի, ջրի, կոմունալ ծառայությունների, հեռախոսի վարձը և վարձավճարի մեջ չմտնող վարձերը վճարվում են Վարձակալի կողմից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը վարձատուի պահանջով.
Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝
- 1) գույքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
 - 2) էականորեն վատթարացրել է գույքի վիճակը.
 - 3) պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.
 - 4) վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգում այն դեպքերում, երբ, օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան, հիմնական վերանորոգում կատարելը վարձակալի պարտականությունն է:
- 4.2. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը վարձակալի պահանջով.
Վարձակալության պայմանագիրը, վարձակալի պահանջով, դատարանով կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝
- 1) վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.
 - 2) վարձակալին հանձնված գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ. որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, գույքը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս.
 - 3) վարձատուն վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգման իր պարտականությունը.
 - 4) հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:
- 4.3. Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ /վաղաժամկետ/ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նախապես մեկ ամիս առաջ գրավոր կերպով միմյանց տեղյակ պահելով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (Ֆորս-մաժոր)

- 5.1. Կողմերն ազատվում են սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարումը հանդիսացել է այնպիսի հանգամանքների հետևանք, որոնք կողմը հնարավոր բոլոր միջոցներով չէր կարող ոչ կանխատեսել և ոչ էլ կանխել: Այդպիսի հանգամանքներ են տարերային աղետները, ռազմական գործողությունները, քաղաքական հուզումները: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է վեց ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

- 6.1. Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքվում է մինչև 15.12.2018թ. (երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի տասնհինգը) ժամկետով:
- 6.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 7.1. Վարձատուն երաշխավորում է, որ նա ամբողջությամբ և միանշանակ օգտվում է տարածքի



սեփականության իրավունքից և որ նա կարող է օրինական կերպով տալ տարածքը վարձակալության և վարձակալին տրամադրել այն իրավունքները, որոնք նախատեսված են սույն վարձակալության պայմանագրով:

7.2. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է կատարել մյուս կողմի խնդրած պատճառաբանված քայլերը տվյալ պայմանագրում նշված կողմերի մտադրությունների իրականացման նպատակով:

7.3. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

7.3.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.3.2. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում սույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.3.3. Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը վարձակալը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը՝ միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.4. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի՝ սույն վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում և ուժի մեջ են մտնում այդ պահից:

7.6. Մենք՝ Կողմերս, լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առընչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ձեռնտու են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր՝ Կողմերիս իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:

7.7. Սույն պայմանագիրը կնքված և վավերացված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկը պահվում է նոտարի գործերում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

7.8. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն նոտարի կողմից վավերացված պայմանագրերի օրինակները ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող բնօրինակին:

7.9. Սույն պայմանագրի վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են վարձակալի կողմից:

ՀԱՅԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ

A. Arsenyev *Արսենյան Արթուր*

Վ Ա Ր Չ Ա Վ Ա Ն
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
Լիազորված անձ՝ ՆԿԵՐ ԲՈՐԻԿԻ ԹՈՒՆՅԱՆ

Զ. Բորիկ *Զեյնաբ Բորիկ*

29/01/2018թ. սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի
Նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ
Ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած ֆիզիկական անձանց ինքնությունը պարզված է,
Նրանց գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի
լիազորություններն, ինչպես նաև անշարժ գույքի պատկանելությունը **ՀԱՅԿ ՎԱՉԱԳԱՆԻ
ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆԻՆ** ստուգված:

ՀՀ քաղաքացիական օրենքի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող
իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿԱՏ ստորաբաժանում՝ 30 (երեսուն)
աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ՝ 2/8 -ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար
ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար *Վանինե Ժորայի*

Վանինե Ժորայի Հովսեփյան




Մասնագետի ստորագրություն
ԿՈՄԻՏԵ

ՈՍԵՆՆԵՐ ԳՐԱԿՆԵՐ ԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐՄԵՆԻ ԳՐԱԿՆԵՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ

ՇԵՆՔԻ ԳՐԱՏՎԱԿԻՑ

1:200
(ՍՈՒՅՆՈՒՄ)

Հարկահարկային պլանը պատկերված է իջև



h = 3.23
D = 0.45
b = 0.10



